

Թիւ 11113  
Սարտ 11, 1964

Բարեջնորդ  
Յովհաննէս Սարկաւազ Գասպարեան  
Հոգեւոր Մատակարար Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Պատուարժան Մխկան Խորհուրդի  
Եիզակօ.

Սիրելի Յովհաննէս Սարկաւազ,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Ձեր Փետրուար 7 թուակիր  
նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Մխկան Ժողովը նկատի ու-  
նենալով թեմական պատգամաւոր Պրն. Յովհաննէս Թադոյեանի Գալիճօրնիա  
փոխադրուած ըլլալու պարագան, չորս տարուան պաշտօնաշրջանով թեմական  
պատգամաւոր ընտրած է Պրն. Մակար Նահապետեանը:

Նորին Սրբազնութիւնը, նկատի ունենալով որ ըստ թեմական Կա-  
նոնադրութեան, համայնքի մը պատգամաւորները կ'ընտրուին նոյն ժամա-  
նակ չորս տարուան պաշտօնաշրջանով, եւ նկատի ունենալով որ Պրն. Յով-  
հաննէս Թադոյեան տակաւին երկու տարի, այսինքն մինչեւ 1965 շրջանը  
պիտի պաշտօնավարած ըլլար, կը հաստատէ Պրն. Մակար Նահապետեանը իբրեւ  
անձնափոխանորդ՝ լրացնելու Պրն. Թադոյեանի շրջանը:

Մնամ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

Եղիշէ վրդ. Կիզիրեան  
Առաջնորդական Փոխանորդ